

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պ. Ե. ՇԱՐԱՐԻԱՆՅԱՆ, Է. Ա. ՊԻՂԱԶՅԱՆ

Ավելի քան 60 տարի առաջ, 1906 թ. Մ. Արեղյանը առաջին անգամ մեր լեզվի՝ ավանդական սկզբունքներով կազմված բերականություններից հանեց սեռական և հայցական հոլովները և իր «Աշխարհաբարի բերականություն»¹ գրքում թողեց հինգ հոլով։ Այնուհետև 1908 թ. հրատարակած «Աշխարհաբարի հոլովները»² աշխատության մեջ պարզաբանեց ու հիմնավորեց իր այդ նորաժուծությունը։ «Նոր դպրոց» ամսագրում³ նույն թվականին Արեղյանի դեմ հանգես եկավ Ստ. Մալխասյանը, աշխատելով ասպցուցել ավանդական տեսակետը։ Մ. Արեղյանը ստիպված էր գրել մի նոր աշխատություն՝ «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում»⁴, որտեղ նա հիմնավորապես մերժեց Ստ. Մալխասյանի առարկությունները, ավելի մանրամասնորեն պարզաբանելով իր տեսակետը։ Հետագայում հրատարակած ուսումնասիրություններում՝ «Աշխարհաբարի շարահյուսություն» (1912 թ.) և «Հայոց լեզվի տեսություն» (1931 թ.) նա դարձյալ դրեց հինգ հոլով։ 1906 թ. սկսած մինչև 30-ական թթ. սկզբները մեր բերականության մեջ ընդունվում և դպրոցներում ուսուցվում էր հինգ հոլով։

30-ական թթ. սկզբներին առանց զիտական լուրջ քննության մերժվեց Արեղյանի՝ հինգ հոլովի տեսությունը, իսկ դասադրքերում մտցվեցին պատմականորեն մեռած սեռական ու հայցական հոլովները և հոլովների թիվը կրկին դարձավ յոթ՝ ավանդական ձևով։ Բայց դրանով մեր լեզվի մեջ չմտան այդ հոլովները, որոնք ժամանակի ընթացքում, պատմական դարզացմամբ լեզվից դուրս են ընկել, այլ սոսկ լեզվի փաստերի և բերականության դասադրքերի միջև առաջացավ հակասություն, անհամապատասխանություն հոլովների հարցում։

Այսպիսի պարագաներում, հասկանալի է, որ ժամանակակից հայերենի հոլովների հարցը չէր կարող նորից քննության առարկա չդառնալ, որովհետև թե՛ դիտական-լեզվաբանական և թե՛ մանկավարժական տեսակետից այն անհրաժեշտություն է և օրակարգի խնդիր։ Ահա այդ անխուսափելի անհրաժեշտության թելադրանքն էին ինչպես «Սովետական դպրոց» թերթի էջերում, այպա և

¹ Աշխարհաբարի բերականություն, հորինեց դոկտ. փիլ. Մ. Արեղյան, Վաղարշապատ, 1906, էջ 135—139։

² Մ. Արեղյան, Աշխարհաբարի հոլովները, Վաղարշապատ, 1908։

³ «Նոր դպրոց», 1908, ապրիլ։

⁴ Մ. Արեղյան, Հայցական հոլովը մեր աշխարհաբարում, Վաղարշապատ, 1909։

ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտում կազմակերպված (1966 թ. նոյեմբերի 3—22-ը) Իրանավեճերը, այդպես էլ «Հանդես»-ում բացված բանավեճը⁵։

Հինգ հոլովի տեսության դեմ արված առարկություններից ամենից շատ տարածվածն այն է, որ այդ տեսությամբ իբր թե հոլովի ձևին առաջնություն է տրվում և հաշվի չի առնվում նրա իմաստը կամ բովանդակությունը, իսկ յոթ հոլով ընդունելու դեպքում իբրև թե հոլովների և՛ ձևն է հաշվի առնվում, և՛ բովանդակությունը, և պահվում է այսպես կոչված «ձևի և բովանդակության միասնությունը»։ Մի կողմ թողնելով «առաջնություն տալու» խնդիրը, որ ըստ էության չկա և չի կարող լինել, տեսնենք մի՞շտ է ասվում, թե յոթ հոլով ընդունելու դեպքում հոլովների և՛ ձևն է հաշվի առնվում, և՛ բովանդակությունը։

1. Ես մոտեցա մի մարդու։

Տեսա մի մարդու։

Մարդու վերարկուն կեղտոտվեց։

Միևնույն մարդու բառաձևը այս երեք նախադասություններից առաջինում տրական են համարում, որովհետև անուղղակի խնդիր է, երկրորդում՝ հայցական, որովհետև կրող կամ ուղիղ խնդիր է, երրորդում՝ սեռական, որովհետև գոյականի վերադիր (հատկացուցիչ) է։ Նշանակում է միևնույն՝ մարդու բառաձևը տարբեր հոլովներ համարելու պատճառը միմիայն դրա տարբեր պաշտոններ կատարելն է, այսինքն հաշվի են առնում միայն բառի պաշտոնը (ֆունկցիան), իսկ ձևը, որ բոլորովին նույնն է, հաշվի չի առնվում։

2. Աղջիկը կանգնած է փողոցում։

Աղջիկը կանգնած է ծովափին։

Այս երկու նախադասություններում փողոցում և ծովափին բառաձևերը համարում են (և են) տարբեր հոլովներ, առաջինը՝ ներգոյական, երկրորդը՝ տրական, և զա միայն այն պատճառով, որ ձևով տարբեր են։ Եթե հաշվի առնվեր դրանց պաշտոնը կամ արտահայտած հարաբերությունը, պիտի ասեին, թե դրանք երկուսն էլ նույն հոլովն են, քանի որ ոչ միայն նույն պաշտոնն են կատարում, այլև նույն հարաբերությունն են արտահայտում, երկուսն էլ նույն կարգի (կամ նույն իմաստով գործածված) տեղի պարագա են։ Ուրեմն ոչինչ չի մնում այն հավաստումից, թե հոլովները որոշելիս հաշվի է առնվում նաև հոլովաձևի բովանդակությունը, տվյալ դեպքում՝ արտահայտվող հարաբերությունը։

3. Աշակերտը գնաց դպրոց։

Սիրեցի մի աղջկա։

Այս նախադասություններում դպրոց և աղջկա բառաձևերը և՛ ձևով են տարբեր, և՛ պաշտոնով, ուստի իրենց արտահայտած հարաբերության տեսակետից էլ տարբեր են, բայց համարվում են նույն հոլովը՝ հայցական։ Էլ որտե՞ղ մնաց «ձևի և բովանդակության միասնությունը», երբ թե՛ ձևով և թե՛ պաշտոնով տարբեր բառաձևեր, ինչպես այստեղ է, համարվում են նույն հոլովը։

Հոլովը ձևի վրա է հիմնված, և հոլովների որոշման սկզբունքը դրանց ձևն է. դա այդպես է ոչ թե նրա համար, թե իբր ձևն ավելի կարևոր է, քան թե այդ

⁵ Տե՛ս «Սովետական դպրոց», 1966, 1-ր հունվ., № 1, 4-ր մարտի, № 10, 25-ր մարտի, № 13, 1967, 9-ր հունվ., № 4 և այլն, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 117—140, 1967, № 1, էջ 80—94։

ձևի արտահայտած նշանակությունը, այլ սոսկ նրա համար, որ նշանակությամբ հոլով որոշելն անհնար է: Հոլովական ձևերը սահմանափակ են և որոշակի, իսկ այդ ձևերի նշանակությունները ոչ միայն շատ ու բազմազան են, այլև՝ մեկ հոլովաձևով շատ նշանակություններ են արտահայտվում, և ընդհակառակն՝ մեկ նշանակություն հաճախ մի քանի հոլովաձևով է արտահայտվում, ուստի հնարավոր չէ նշանակությունների վրա հիմնվելով որևէ լեզվի համար հոլովների որոշակի կարգ սահմանել և որոշել, թե քանի՞ հոլով կա այդ տվյալ լեզվում: Երաբարում և արևմտյան հայերենում ներգոյական հոլով չեն դնում, որովհետև գրանցում ներգոյականի առանձին ձև չկա. այդպես է ընդունված նաև ուրիշ լեզուներում, օրինակ, անգլերենի քերականություններում միայն երկու հոլով են դնում, որովհետև անգլերենում միայն երկու հոլովաձև կա:

Մ. Արեղյանը «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում» գրքույկում նորից քննության ենթարկեց հայցականի խնդիրը, մերժելով Ստ. Մալխասյանի առարկությունները և պատասխան տալով այն բոլոր հարցերին առհասարակ, որ ծագում են այդ կապակցությամբ. Պրոֆ. է. Աղայանը, որ արդի հայերենում ընդունում է վեց հոլով, «Հանդես»-ում սույնգրված իր հոդվածում՝ նույնպես անդրադարձել է այդ հարցին և փոխակերպման մեթոդը կիրառելով, հանգել միևնույն եզրակացության՝ արդի հայերենը չունի հայցական հոլով: Այսքանից հետո ավելորդ համարելով նորից անդրադառնալ այդ խնդրին, կանգ առնենք միայն գործնական կողմի վրա:

Գործնական տեսակետից անհնար է հայոց լեզվի դասագրքերում ճշտությամբ հայցական հոլով դնել: Որ դա այդպես է, երևում է մեր քերականության դասագրքերից, որոնցում բոլոր հոլովների ձևերը ճշտությամբ դրված են, բայց հայցականի համար այդպիսի ճշտություն չկա: Որքան էլ հայցական ու սեռա-

6 Համաձայն հինգ հոլովի տեսության ոչ քն ընդհանրապես հինգ հոլովական ձև կա, այլ ամեն բաց ունի հինգ հոլովական ձև, և հոլովական հարացույցներն էլ կազմվում են ոչ որպես վերջավորությունների (ի- քարի, ոչ- քրոջ և այլն) և բառարնի հնչյունների փոփոխության տեսակների (այ-ո. հայր-հոր) շարք՝ անջատված բառարնից, այլ որպես բառաձևերի շարք՝ քաղաք. քաղաքի, քաղաքից, քաղաքով, քաղաքում: Մեր երկրորդ հոլովն ունի մի քանի ձևեր՝ քար-քարի, գինի-գինու, օր-օրվա, եղբայր-եղբոր, քույր-քրոջ և այլն, բացառականն ու գործիականն էլ ունեն տարրեր ձևեր (քարից, այգուց, քարով, արյամբ), իսկ հոլովման ժամանակ բառաձևերի տեսակների բացարձակ թիվը՝ հաշված վերջավորություններով (քար-ի) ու բառարնի հնչյունների փոփոխությամբ (եղբայր-եղբոր) կազմված հոլովումները և հոգնակիակերտ վերջավորությունները՝ մոտ երկու տասնյակ, մի այդքան էլ հոգով ձևերը (յոթ հոլովի կողմնակիցները, ինչպես կտեսնենք, հոգն էլ են համարում հոլովակազմիչ)՝ անցնում է 40-ից: Բայց ամեն բաց ունի միայն չորս կամ հինգ ձև (շատ բառեր եզակիում ներգոյական չունեն, ուստի ունեն 4 հոլովաձև). և՛ քար բառը ունի 5 ձև, և՛ օր բառը ունի 5 ձև, գինի բառը՝ 4 կամ 5 ձև, քույր բառը՝ 4 ձև, եղբայր բառը ունի 4 ձև, և այսպես գոյականներից ամեն մեկը ունի միայն 4 կամ 5 ձև:

Ահա այս է նշանակում ձևով հոլով որոշելը, եթե մեկը փորձի կազմել մեր բոլոր գոյականների հոլովական հարացույցները, ապա ամեն մի գոյականի համար կազմված շարքը բաղկացած կլինի չորս կամ հինգ բառաձևից և ոչ ավելի: Անշուշտ հոգնակիի վերջավորությունները՝ -եր, -ներ, նոր հոլով չեն կազմում, այլ նույն հոլովի թիվն են փոխում: Մի քանի բառեր միայն նույն հոլովի համար ունեն զույգ ձևեր, ընկերի-ընկերոջ, արյունով-արյամբ և այլն, որոնք նույն հոլովի պատմականորեն առաջացած զույգ՝ հին ու նոր ձևերն են, որոնցից մեկն, անշուշտ, ժամանակի ընթացքում դուրս կմղվի մյուսի կողմից. այդ զույգ ձևերը հոլովների հարացույցներում մեկ տեղ են լինում և չեն հակադրվում իրար:

7 Է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովները, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 4, էջ 117—140. տե՛ս նաև Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 184—220:

կան հոլովների պատճառով դասագրքերը ծանրաբեռնում են՝ հոլովական հարացույցներում ղեկավար անձի և իրի անունների որոշյալ և անորոշ հոլովում, այնուամենայնիվ դա չի օգնում հայցականի բոլոր հնարավոր ձևերը ճշտությամբ ղեկուն և միշտ մի բան պակաս է մնում: Այդպես է վիճակը թե հին՝ ակադ. Ա. Ղարիբյանի կազմած, և թե նոր՝ պրոֆ. էդ. Աղայանի և դոց. Հ. Բարսեղյանի կազմած դասագրքերում:

Նոր դասագրքում ի հոլովման համար բերված բանվոր բառի հայցականը ղրված է երեք ձևով՝ բունվոր, բանվորի, բանվորիս, բայց այս բառի որոշյալ հայցականը կարող է լինել նաև բանվոր ձևով, որ չի ղրված, օրինակ՝ նրանք ունեն իրենց բանվորը, գործարանաւերը ղարձավ ղեկի բանվորը նախադասություններում: Նույնը վերաբերում է այդ գրքում բերված ուսուցիչ բառին: Ամուսին բառի հայցականը բայ նոր դասագրքի ունի երկու ձև՝ ամուսին և ամուսնու, իսկ բայ հին դասագրքի՝ երեք ձև՝ ղրանցից բացի նաև ամուսնու ձևը: Մաքր բառի հայցականի համար, ընդհակառակն՝ հին դասագրքին է տալիս երկու ձև (մաքր, մաքրուն), իսկ նորը երեք ձև՝ (մաքր, մաքրուն, մաքրու): Կարևոր չէ, թե երկու դասագրքերից որն է ճիշտ. կարևորն այն է, որ երկու դասագրքերում էլ բացակայում է հայցականի համար մի շորորող ձև՝ ամուսինը, մաքրը, որ անկասկած հայցականի ունի (եթե ընդունվում է այդ հոլովը), օրինակ՝ նա էլ ունի իր մաքրը, նրանք ղեկին ղեկի այն մաքրը և այլն: Այսպիսով՝ նույն գրքում մեկ անձի անվան հայցականի համար ղրվում է երկու ձև (որդի և որդուն), մի այլ անձի անվան համար՝ երեք ձև (ուսուցիչ, ուսուցչի, ուսուցչին), կամ հենց միևնույն անձի անունը (օրինակ՝ մարդ) մի դասագրքում երկու ձևով է, մյուսում՝ երեք:

Բայց միայն անձի անունների հայցականը չէ, որ այս վիճակում է, նույնը վերաբերում է նաև իրի անուններին: Մեր քերականություններում իրի անունների հայցականը միայն ուղղականի ձևով են ղեկում՝ որոշյալ և անորոշ, մինչդեռ իրի անունները ևս կարող են հայցականի իմաստով (տվյալ ղեկը որդի պես կրող խնդիր) գործածվել տրականի ձևով. օրինակ՝ «քաղցրածայն սոխակ գտել է վաղից: Հասոն փախելին էր ղողացնում, ղեկի ուղիքում» և այլն: Ուրեմն, մեր դասագրքերը իրի անունների հայցականի համար միայն ուղղականի ձև ղեկում՝ թերի ու պակասավոր են թողնում հայցականի ձևերը:

Դասագրքերում թերի է ղրվում նաև մի քանի ղերանունների հայցականներ: Նա և ինքն ղերանունների հայցականը երկու դասագրքերում էլ ղրված է մեկ ձևով՝ նրան և իրեն: Իսկ երբ ասում ենք՝ ուսուցիչը ղարձավ ղեկի նա, ղեկի ինքը, այս կապակցություններում նա, ինքը հայցական են, թե ուղղական: Անշուշտ, կասեն՝ հայցական, մինչդեռ հիշյալ դասագրքերում ղրանք հայցականի համար չեն ղրված և համարված են միայն ուղղական: Մի հարցական ղերանվան համար ղրված է միայն ու՛մ ձևը, մինչդեռ ղրա հայցական պետք է համարվեր նաև ո՛վ ձևը, օրինակ, էլ ո՛վ ունենք մենք նախադասության մեջ:

Հայցականի հնարավոր ձևերը ճշտությամբ ղեկու համար ամեն անգամ պետք է մտածել, թե տվյալ բառը ի՞նչ հնարավոր ձևեր կարող է ունենալ հայցականում: Մի բառ հայցականի համար, հոգով և անհոգ ձևերը միասին հաշված, ինչպես անում են մեր քերականները, կարող է ունենալ երկու ձև, մի ու-

⁸ Զորդի հայերենի ղպրոցական քերականություններում ղոյականների հոլովումները ղույթ տալու համար հարացույցներում ղեկում են անձի և իրի ղորոշյալ և ղանորոշ հոլովում՝ եկատի

րիշ լաո՝ երևք, մի ուրիշ բառ էլ՝ չորս: Թայց հնարավոր է, ամեն անգամ ճշտորեն որոշել, թե այսինչ բառը հայցականում ի՞նչ ձևեր կարող է ունենալ. օրինակ՝ ուղի բառը հայցականում քանի՞ ձև կարող է ունենալ՝ երկու, երեք, թե՛ չորս:

Հայցականը, ուրեմն, միայն կիրառությամբ է որոշվում, իսկ ամեն բառի հայցականի իմաստով կիրառությունները միայն շարահյուսությունը կարող է տալ: Ուստի քանի դեռ ձևաբանության մեջ մեր քերականները հայցականն առանձին հոլով են դնում՝ միշտ սխալ կամ պակասավոր կլինեն նրա հարացուցային ձևերը, մի բառի համար մի դասադիրք կդնի երկու, մի ուրիշը՝ երեք, մի երրորդն էլ՝ չորս ձև: Այդ ձևերը որոշակիորեն դնել պարզապես հնարավոր չէ: Եվ հնարավոր չէ, որովհետև, հակառակ մյուս հոլովների, որպես հայցական (մասամբ նաև սեռական) հոլովի որոշման հիմունք վերցնում են նրա պաշտոնները, ավելի ճիշտ՝ հայցական հոլով են դնում այն պաշտոնների համար, որոնք մեր հին լեզվում և ուրիշ լեզուներում արտահայտվում են առանձին ձև ունեցող հայցական հոլովով:

Հայցականի նկատմամբ այդ հիմունքը կիրառելով՝ մի կողմից՝ տարբեր հոլովներ որոշելիս տարբեր ելակետ է ընդունվում (մեկ՝ ձևը, մեկ՝ իմաստը կամ պաշտոնը), մի բան, որ անընդունելի է ու խառնաշփոթություն է առաջացնում, մյուս կողմից՝ ստեղծվում է զգալիորեն զալբոցում քերականություն ուսուցանելիս: Իրոք, եթե մասնագետ քերականների համար զգալի է կամ անհնար հայցականի բոլոր ձևերը նշտորեն դնել հարացույցում, որքան առավել ևս զրգովար կամ անհնար է աշակերտի համար՝ նախօրոք իմանալ այն պաշտոնները, որոնք զրաբարում կամ ուրիշ լեզուներում արտահայտվում են հայցականով՝ հասկանալու համար, թե մեր լեզվում ո՞րն է հայցականը, քանի որ նա ձևով դատել, տարբերակել չի կարող այդ հոլովը: Այնինչ ավելի բնական է նախ սովորեցնել հոլովների ձևերը, ապա՝ այդ ձևերով արտահայտված պաշտոնները, ինչպես որ արվում է այլ լեզուների քերականություններում:

Այսպես է դործնական տեսակետից:

Քերականությունների միջից անձև հոլովների՝ հայցականի և սեռականի վերացմամբ, ահա, վերանում է խախուտ ու շփոթ վիճակը, մտցվում է պարզ ու որոշակի սկզբունք՝ հոլովները որոշվում են իրենց ձևով, անկախ իրենց ար-

ունենալով բառերի վրա ր. և հոգերի զրվելն ու չզրվելը: Ըստ այսմ՝ երևանք մեծ քաղաք է և ես ապրում եմ երևան քաղաքում նախադասությունների մեջ հոգով ուղղականը (ծրեանը) որոշյալ է, իսկ անհոգ ուղղականը (ծրեան)՝ անորոշ, քայց իրականում դրանց միջև որոշյալի և անորոշի տարբերություն չկա, այլ միայն հոգի գործածությունը տարբեր է. երբ հատուկ անունը ենթակա է, սովորաբար առնում է որոշող հոգ, իսկ երբ վերադիր է, հոգ չի առնում: Իրան հակառակ՝ առյուծը վայրի կենդանի է նախադասության մեջ առյուծը բառը ունի հոգ. քայց գործածված է ընդհանուր անորոշ իմաստով: Ուրեմն, ր. և հոգի գործածությունը հաճախ անկախ է բառի որոշյալ և անորոշ լինելուց. մի բառ առանց հոգի էլ կարող է որոշյալ իմաստով լինել և ընդհակառակն՝ հոգով էլ կարող է անորոշ լինել: Հոգի կիրառությունը շարահյուսությանն է վերաբերում, ուստի հոլովման հարացույցները առանց հոգի պետք է դնել: Նշանակում է գոյականների հոլովումը հարացույցներում «որոշյալ» և «անորոշ» դնելով մեր քերականները մի կողմից սխալ պատկերացում են տալիս աշակերտին բառերի որոշյալության և անորոշության, մյուս կողմից՝ հոգի դերի ու կիրառության մասին: Հոլովման հարացույցների խճողումը անձի և իրի «որոշյալ» և «անորոշ» հոլովումներով, — որի հետևանքով, օրինակ, միայն ի հոլովման համար աշակերտը հինգ բառաձևի փոխարեն պետք է սովորի հին դասագրքով 27, իսկ նորով՝ 20 բառաձև (չհաշված հոգնակիները) — նպատակ ունի արդարացնելու պատմականորեն մեռած հոլովների վերականգնումը քերականություններում:

տահայտած իմաստից և կատարած պաշտոնից: Դրանով ոչ միայն ձևաբանություն մեջ է պարզություն մտնում, այլև շարահյուսության, քանի որ բառի պաշտոնն էլ որոշվում է ոչ թե նրա հոլովաձևով, այլ նախադասության մեջ մյուս բառերի նկատմամբ ունեցած հարաբերությամբ:

Ինչպես որ մեր հին լեզվի հայցակաճեր ձևով վերացել և նույնացել է ուղղականի հետ, և հին այդ երկու հոլովներն այժմ մեկ ընդհանուր հոլով են դարձել, այդպես էլ հին սեռական և տրական հոլովները, որոնք զրաբարում ևս մեծ մասամբ նույն ձևն ունեն, այժմ դարձել են մեկ ընդհանուր հոլով: Ամբողջ լեզվի մեջ կա միայն ութ բաց դերանուններից, որոնք հինգի փոխարեն ունեն վեց ձև՝ իմ, քո, իր, մեր, ձեր, սրա, դրա, նրա՝ սեռականի և ինձ, քեզ, իրեն, մեզ, ձեզ, սրան, դրան, նրան՝ տրականի համար: Թե ինչու լեզուն սեռականի ու տրականի ձևերի նույնացման մեջ այս ութ բառի նկատմամբ բացառություն է արել, այդ մանրամասնորեն բացատրված է Մ. Արեղյանի «Աշխարհաբարի հոլովները» աշխատության մեջ: Արեղյանը ցույց է տվել, որ այդ բացառությունը սոսկ երևութական է: Գրաբարում իմ, քո, իւր, մեր, ձեր ձևերը և՛ անձնական դերանվան սեռական են, և՛ ստացական դերանուն: Աշխարհաբարում դրանք պահպանվել են ոչ թե որպես անձնական դերանվան սեռական, այլ որպես ստացական դերանուն և իրենց կիրառության բաղձազան ղեպերով համապատասխան են զրաբարի ստացական դերանունների կիրառությանը, երբեմն ստանում են տրականի նշանակություն կամ փոխարինվում են տրականով. օրինակ՝ «Մեր սահմանակից երկրները, մեզ սահմանակից երկրները, իմ համախոհները, ինձ համախոհները, իմ աջակից մարդը, ինձ աջակից մարդը և այլն»⁹։ Կապերի հետ անձնական դերանունների տրականներն են գործածվում մեծ մասամբ՝ ինձ պես, քեզ համար:

Ցուցական դերանուններից սրան, դրան, նրան ձևերի վերջի ն-ն ըստ Մառի հոդ է, իսկ ըստ Արեղյանի հոդ չէ, այլ հոլովակերտի մաս, ինչպես ունենք զրաբարում՝ աղջկան, իսկ աշխարհաբարում՝ աղջկա, և ապա սրան, դրան, նրան բառաձևերի վերջի ն-ն անունների նմանությամբ իբրև հոդ է ըմբռնվել (ինչպես որ աղջկան ձևի վերջի ն-ն, որ զրաբարում հոլովակերտի մաս է, այժմ իբրև հոդ է ըմբռնվում, անհոդ ձևն է՝ աղջկա) և պահվել, որով և գործածության տարբերություն է առաջացել սրա, դրա, նրա և սրան, դրան, նրան ձևերի միջև: Ուրեմն երկու ղեպերում էլ՝ վերջին ձևերի ն-ն հոդ համարվի թե ոչ, այս երկու ձևերը պետք է դրվեն որպես մեկ հոլովի զույգ ձևեր և շարահյուսության մեջ բացատրվի դրանց կիրառության տարբերությունը¹⁰:

Հինգ հոլովի տեսության հակառակորդները սեռական-տրականի նույնացումը ևս չեն ընդունում: Ուշադրություն է դրավում մի հանգամանք: Եթե հայցականի և ուղղականի նույնացմանը յոթ հոլովի կողմնակիցներն առարկում են նրանով, որ դրանք իրենց արտահայտած հարաբերություններով տարբեր են, ապա սեռականի ու տրականի նույնացման ղեմ նրանք ոչ թե այդ, այլ մի ուրիշ առարկություն են առաջ քաշում, այն է՝ դերանունների մեջ սեռականն ու տրականը տարբերվում են, սեռականը հոդ չի ստանում, իսկ տրականը ստանում է, այսինքն հոդը համարում են հոլովները տարբերակող նշան՝ վերջավորությունը համանիշ հոլովակազմիչ: Ուրեմն, ի տարբերություն ուղղականի և

⁹ Մ. Արեղյան, Աշխարհաբարի հոլովները, էջ 29

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 32—33:

հայցականի, որոնք ձևով չեն տարբերվում, նրանք ձևի տարբերություն են ուզում տեսնել սեռականի և տրականի միջև, այսինքն, ձևով հոլով որոշելու ըսկըղբունքը, որ նրանք մերժում են հայցականի և ուղղականի համար, սեռականի և տրականի նկատմամբ կարծես ցանկանում են կիրառել¹¹։ Սեռականի ու տրականի տարբեր հոլովներ լինելը ուզում է ապացուցել նաև պրոֆ. Աղայանը, որ մերժում է հայցականն իբրև առանձին հոլով։ Տեսնենք ինչպես է բացատրում նա սեռականի ու տրականի տարբեր հոլովներ լինելը։

Պրոֆ. Աղայանը որպեսզի ցույց տա, թե սեռականը տրականից տարբեր ձև ունի, ուստի և առանձին հոլով է, բերում է մի քանի իրար զուգորդող նախադասություններ, որոնց մեջ իր քննարկած հոլովաձևով զրված բառը գործածում է մեկ հոգով, մեկ էլ՝ անհոգ, ապա այդ եռյն բառաձևերը փոխարինում է ղերանուններով, և որովհետև հոգով բառաձևերը համազոր է համարում ղերանունների տրականի ձևին, իսկ անհոգ ձևերը՝ ղերանունների սեռական համառված ձևին, ղրանից եղրակացնում է, թե գոյականի հոգով ձևը տրական է, իսկ անհոգ ձևը՝ սեռական։ Նրա բերած առաջին ղույգ օրինակում՝ «Մոր կարոտը տանջում է նրան։ Մորը կարոտ մնաց» ոչ միայն հոգի տեղափոխություն կա, այլև ուրիշ բառեր ևս փոխված են, ուստի և մոռ և մոռը բառերի պաշտոնի փոփոխությունը և ղերանունների տարբեր ձևերով՝ մոր — բո, մորը — քեզ, փոխարկման հնարավորությունը կարող է առաջանալ նախադասության մյուս անղամների տարբերությունից՝ առնջում է նրան և մնաց. և հենց այդպես էլ է։ Բայց դա թողնենք։ Երկրորդ ղույգ օրինակում՝ «Որբին ընկեր եղիր, ծերին՝ ապավեն։ Որբի ընկեր եղիր, ծերին՝ ապավենը»¹², միայն հոգի տեղափոխություն է կատարված։ Առաջին նախադասության մեջ հոգը ղրված է ուրբին և ծերին բառաձևերի վրա, երկրորդում՝ ընկերը և ապավենը բառաձևերի վրա։ Ծթե ղուգորղությունը վերցնենք ոչ թե հոգի տեղափոխությամբ, այլ միայն քննարկվող բառաձևերը գործածելով մեկ հոգով և մեկ էլ անհոգ, կլինի. «Որբին ընկեր եղիր, ծերին՝ ապավեն։ Որբի ընկեր եղիր, ծերին՝ ապավեն»։ Այս կապակցությունների քննարկվող բառաձևերը ղերանուններով փոխարինելիս երկու ղեպում էլ կունենանք «ինձ ընկեր եղիր, նրան ապավեն», որովհետև անհոգ գոյականների փոխարկումը իմ, նրա ձևերով՝ «իմ ընկեր եղիր, նրա՝ ապավեն» գրական լեզվի համար խորթ է։ Ուրեմն բերված ղուգորղության մեջ՝ ուրբի ընկեր եղիր. ուրբին ընկեր եղիր. թե՛ հոգով և թե՛ անհոգ ձևը՝ ուրբի, ուրբին, ազատ կերպով կարող ենք ըմբռնել, և ըմբռնում ենք, իբրև տրական (անուղղակի խնդրի իմաստով՝ ընկեր ղարծիր, ընկերացիր ուրբի)։

Բայց հիշյալ օրինակները վերցնենք այնպես, ինչպես այն բերել է պրոֆ. Աղայանը, ի՞նչ է անում նա քննարկվող բառաձևերը մի ղեպում հոգով, մյուս ղեպում անհոգ գործածելով, կամ ափելի ճիշտ՝ հոգի տեղափոխություն կատարելով («ուրբին ընկեր եղիր, ուրբի ընկեր եղիր»)։ Նա ղրանով մի բան է անում միայն՝ հոգի միջոցով փոխում է բառի պաշտոնը, հոգով բառաձևը մնում է որպես անուղղակի խնդիր, իսկ անհոգ ձևը ղառնում է գոյականի վերաղիր (արդի տերմինոլոգիայով՝ հատկացուցիչ)։ Բայց մի՞թե բառի պաշտոնը փոխ-

¹¹ Տե՛ս, օրինակ. Ա. Ս. Ղ ա ր ր յ ա ն, Հայոց լեզվի ավանդույթային հարցերի շուրջը. «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 1, էջ 89։

¹² Տե՛ս է. Թ. Ա ղ ա յ ա ն, Ելվ. հոգվածը, էջ 134 և Ելվ. մենագրությունը, էջ 211։

վերսկզբից անպայման փոխվում է և նրա հոլովը: Վերջենք հետևյալ պոչի նախադասությունները.

Ոսկի բաժակը լցվեց:

Ոսկին բաժակը լցվեց:

Սրանցից առաջինում ոսկի բաժը անհոգ է և գոյականի վերադիր (որոշիչ), երկրորդում հոգով է և ենթակա՝ միանգամայն տարբեր պաշտոններ, բայց նույն հոլովով՝ ուղղականով գրված: Նույնը ստացվում է և հոգի տեղափոխությամբ.

Ջուրը դարձավ գոլորշի:

Ջուր դարձավ գոլորշին:

Առաջին նախադասության մեջ ջուրը հոգով է և ենթակա, երկրորդում՝ նույն բաժը անհոգ է և ստորոգելիական վերադիր, բայց երկուսն էլ գրված են նույն ուղղական հոլովով. գոլորշի ստորոգելիական վերադիր է, գոլորշին՝ ենթակա, բայց երկուսն էլ ուղղական հոլովով են (հմտ. նաև՝ Վաղան գորավարը հրուշակվեց և Վաղանը գորավար հռչակվեց. արյունը վարձավ ջուր և արյուն դարձավ ջուր և այլն):

Հոգի միջոցով բառերի պաշտոնի այսպիսի փոփոխությունից փոխվեց բառի հոլովը. բնավ ոչ, հոլովը մնաց նույնը: Բոլորովին նույն բանն է անում պրոֆ. Աղայանը, բայց պնդելով, թե բառի հոլովը փոխվում է:

Երբ պրոֆ. Աղայանը իր բերած գոյականների ձևերը փոխարինում է ղերանուններով՝ ուրի, ծերի = իմ, նրա, իսկ ուրի, ծերի = ինձ, նրան, և դրանից եզրակացնում, թե ուրի, ծերի սեռական են, իսկ ուրի, ծերի՝ տրական, նա դրանով, առանց խնդիրը քննելու, սոսկ ընդունում է, թե իմ, քո, իր, մեր, ձեր սեռական են (դրանց հետ նույնացնելով նաև՝ սրա, դրա, նրա ձևերը): Նա գրում է, թե ածականների և ստացականների հոլովումից զրկվելը «հանգեցրեց անձնական ղերանվան սեռականի և ստացականի նույնացման: Այդ նույնացման ժամանակ ո՛րը պահպանվեց՝ սեռականը, թե ստացականը. սա որոշելի անկարելի է, որովհետև դրանք ձևով աբղեն նույնական էին: Բայց այն փաստը, որ սեռականն էր ինքնուրույն գործածության ձևը, պետք է մտածել, որ դա էլ պահպանվեց»¹³:

Այս մտքի հետ համաձայնել չի կարելի. քնդականական՝ զրարարի անձնական ղերանվան սեռականի ինքնուրույն գործածությունն է հենց, որ վերացել է աշխարհագրորում, այն է՝ դրանց գործածությունը բայի հետ՝ «են իմ անդ եզրարք հինգ», որ աշխարհագրոր ասվում է ուրիշ կադմությամբ՝ ևս այնտեղ հինգ եզրարք(ներ) ունեմ և կամ ստացական տրականով՝ ինձ այնտեղ հինգ եզրարք կա, և գործածությունը նախդիրների հետ՝ «Յայժմ ևս վասն քո յաշտ առնէի, յայսմհետէ դու վասն իմ առնիցես» (Եղիկ), որ աշխարհագրորում ասվում է տրական հոլովով՝ քեզ համար, ինձ համար: Մնացած ղեպերում այդ ձևերը որպես ստացական ղերանուն գրվում են մի գոյականի կամ գոյականաբար գործածված բառի հետ՝ դառնալով դրանց վերադիրը՝ մայր իմ = իմ մայրը, ի մօրէ իմմի = իմ մորից, որ աշխարհագրորում ևս կան, միայն աշխարհագրորում ստացական ղերանունը չի համաձայնում իր գոյականի հետ, բանի որ այնտեղ առհասարակ վերացել է գոյականի և իր վերադիր համաձայնությունը, և դա կապ չունի քննարկվող ձևերի ստացական ղերանուն անվանման հետ:

¹³ Է. Ք. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, էջ 209—210.

Ուրեմն պրոֆ. Աղայանը ոչ թե պետք է սոսկ ընդուներ, թե քննարկվող ձևերը սեռական են, այլ մեկ առ մեկ քննելով դրանց կիրառությունները անունների, ղերբայների, ածականների և կապերի հետ յույց տար, որ դրանք ոչ թե ստացական ղերանուն, այլ անձնական ղերանվան սեռականի կիրառություններ են. դա պետք է աներ, որովհետև այդ ձևերի զործածությունները աշխարհաբարում մեր քերականները՝ Այտնյանը, Պալասանյանը ստացական ղերանուն են համարել, թեպետ որպես ձևեր երկրորդ անգամ կրկնել են նաև անձնական ղերանունների մեջ, և Արեղյանը ևս դրանք մեկ առ մեկ քննելով՝ համեմատությամբ զրաբարի, պարզել է, որ դրանց կիրառությունը ստացական ղերանվան կիրառություն է:

Բայց ենթադրենք, թե այդ լեզվարանները սխալվել են և այդ ձևերը անձնական ղերանվան սեռականներ են, զրանով կարո՞ղ է ապացուցվել, թե դրանց փոխարինող գոյականներն էլ սեռական են: Բառերի ստորադասական կապակցության մեջ լրացումի ձևը հաճախ կախված է ոչ սխալ լրացյալի բաղմասաից. այլև հենց լրացում եղող բառի տեսակից: Օրինակ, ասում ենք՝ սենյակում վախի կառ, եթե այս նախադասության սենյակում բառաձևը փոխարինենք -ոտն բառի ձևով, կունենանք՝ տանը վախի կառ: Մինչևից պաշտոնն ու հարաբերությունը մի ղեպքում ներգոյականով ենք արտահայտում, մյուս ղեպքում՝ տրականով, որովհետև այդ պաշտոնի կրողները տարբեր բառեր լինելով՝ տարբերություն ունեն հոլովների քանակի և հոլովման ձևի կողմից: Նշանակում է նախադասության մի բառ մի ուրիշ բառով փոխարինելիս կարող է փոխվել նրա հոլովը, ուստի և սենյակում ներգոյականից ելնելով շենք կարող ասել, թե տանը բառաձևը նույնպես ներգոյական է, և սենյակ բառի հինգ հոլովաձևից մակարերելով շենք կարող ասել, թե տուն բառը ևս հինգ հոլով ունի: Մի ուրիշ օրինակ. կինը վաղոցում մառղ տեսավ. այս նախադասության մառղ բառը ղերանվամբ փոխարինելիս կստանանք՝ կինը վաղոցում ինձ տեսավ. որոնց մեջ մառղ ուղղական է, ինձ՝ տրական: Այսպիսի օրինակներից ելնելով չի կարելի ասել. թե՛ եթե մի կապակցության մեջ մի բառ ղրված է այսինչ հոլովով, ապա նրան փոխարինող բառն էլ ղրված է նույն հոլովով: Նման մոտեցումը ոչ թե սեռականի գոյություն է ապացուցում, այլ հանգեցնում է յոթ հոլովի տեսության, ըստ որի եթե նույն կապակցության մեջ տարբեր բառաձևեր նույն պաշտոնն են կատարում՝ նույն հոլովն են երբեմն (երբեմն ենք ասում, որովհետև նույն պաշտոն կատարող տարբեր բառաձևեր միշտ չէ, որ նույն հոլովն են համարում): Իսկապես, յոթ հոլովի տեսության զրույթներով վերը բերված նախադասություններում՝ կինը փողոցում մառղ տեսավ, կինը փողոցում ինձ տեսավ՝ մառղ և ինձ բառաձևերը երկուսն էլ հայցական են:

Ուրեմն այսպիսի փոխարկումները ոչինչ չեն ասում սեռականի և տրականի տարբեր հոլովներ լինելու մասին. մի նախադասության մեջ մի բառ կարող է լինել մի հոլովով, բայց նրան փոխարինող մի ուրիշ բառ կարող է նույն հոլովը չլինել, այլ մի ուրիշ հոլով (սենյակում—տանը). փոխարկվող բառերի հոլովն առավել ևս տարբեր կարող է լինել, եթե դրանք տարբեր կարգի բառեր են՝ գոյական անուն և ղերանուն (մառղ—ինձ), Այսպես՝ հենց պրոֆ. Աղայանի կազմած «Հայոց լեզու» դասագրքում կարգում ենք. «Ծտաղրություններից շատերը զործածվում են սեռական հոլովի հետ... Այդպիսի ետաղրություններից են՝ ...համար ...մոտ, վրա, պես, շափ, նման և այլն»: Ծվ ապա՝ «Մոտ, վրա, պես, համար, նման, շափ ետաղրությունների հետ զործածվելիս

առաջին և երկրորդ դեմքի անձնական գերանունները գրվում են տրական հոլովով»¹⁴։

Նշանակում է, սեռականը և տրականը առանձին հոլովներ ընդունելու գեպրում էլ, եթե պրոֆ. Աղայանի բերած նախադասություններում իմ բառաձևը սեռական է (ենթադրյալ), դրանից տրամաբանորեն չի բխում, թե ուրի բառաձևն էլ սեռական է։

Գոյականների սեռականի գոյությունն ապացուցելու համար գերանուններին դիմելը տեսականորեն ևս ճիշտ չէ, որովհետև միևնույն լեզվի մեջ դեռանվան և գոյականի հոլովական ձևերը քանակով տարբեր կարող են լինել և գերանունների ենթադրյալ վեց հոլով ունենալը չի կարող ապացույց լինել այն բանի, թե գոյականներն էլ վեց հոլով ունեն։

Ձպետք է մոռանալ, որ հայերենի հայցական և սեռական հոլովները պատմականորեն բոլորովին նույն վիճակում են և քերականությունից դրանք հանելու հիմունքն ու սկզբունքը նույնն է. անհնար է մեկը հանել առանց մյուսի։

Խնդիրը մի ուրիշ կողմ էլ ունի։ Պրոֆ. Աղայանը երբ բերում է վերոհիշյալ օրինակները, պնդում է, թե հոգով և անհոգ ձևերը (որբի—որբի) տարբեր բառաձևեր են, այսինքն թե և հոգը հոլովակազմիչ վերջավորության նշանակություն ունի. թայն բանի հետևանքով, որ սեռականը հոգ չի ստանում, տրականի վրա որոշիչ հոգը հանդես է գալիս իբրև տարբերակիչ հատկանիշ»¹⁵։ Եթե հոգը սեռականի ու տրականի համար տարբերակիչ հատկանիշ է, ինչո՞ւ պետք է այդպիսին չլինի ուղղականի և կոշականի համար։ Նման մոտեցմամբ կոշականը ևս ուղղականից տարբեր հոլով պետք է համարվի, քանի որ հոգ չի ստանում։ Եվ ոչ միայն կոշականը. կան ուրիշ կիրառություններ ևս, որ հոգ չեն ստանում, ինչպես ուղղականի իբրև վերադիր՝ Երասխ գետը հորդացել էր, նպատակի տրականը՝ զնացին գրոսնելու և այլն։ Բայց կոշականի և մյուս կիրառությունների հոգ չստանալուն նշանակություն չի տրվում, իսկ սեռականի, այսինքն գոյականի վերադրի (հատկացուցչի) հոգ չստանալուն նշանակություն տրվում է։ Բայց եթե նույնիսկ, հակառակ լեզվի փաստերին, ընդունենք, թե հոգը տարբերակիչ հատկանիշ է, դրանով էլ չի ապացուցվում, թե սեռականն ու տրականը ձևով տարբեր են. առավելագույնը, որ կարելի է բխեցնել երկրորդ հոլովաձևի հոլով և անհոգ ձևերից, այն է, որ սեռականն ու հոգով տրականը տարբեր ձևեր ունեն։ Իսկ ո՞ւր է մնում անհոգ տրականը. անհոգ տրականը ձևով նույնանում է սեռականի հետ և դարձյալ դրանք ձևով իրարից չեն զանազանվում։ Հոգը մեզ չի օգնում, բաց է մնում շփոթությունների ու կամայականությունների դուռը. «Թույլտվություն եմ խնդրում իրեն ներկայանալու» նախադասության մեջ ներկայանալու բառաձևը մեկը սեռական կհամարի, մի ուրիշը՝ տրական, Բեկերս նախագահ եղավ մի մեծ ժողովի, գերի մի՝ լինիւ կրէրի նախադասություններում՝ ժողովի, կրէրի բառաձևերը կուղենք սեռական կհամարենք, կուղենք՝ տրական։ Իսկ կապերի խնդիրները որոշելիս, օրինակ՝ ժողովրդի համար, առանց հացի և այլ կապակցություններում, մենք անզոր կմնանք, չենք կարող որոշել՝ ժողովրդի, հացի սեռական են թե տրական։ Եթե մեկը այս օրինակները փոխարինելով դերա-

14 է. Ք. Աղայան, Հ. Խ. Բարսեղյան, Հայոց լեզու, դասագիրք, Երևան, 1967, էջ 329։

15 է. Ք. Աղայան, նշվ. աշխ., էջ 219։ Անունների անհոգ գործածության մասին տե՛ս Մ. Արսեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 522—528։

նուններով՝ պնդի, թե սեռական են՝ նրա համար, առանց նրա, մի ուրիշն էլ զարձյալ դերանուններով փոխարինելով՝ կպնդի, թե տրական են՝ ինձ համար, առանց վեզ:

Ժամանակակից հայերենի հոլովական համակարգի պիտական բացատրությունը կապված է Մ. Արեղյանի անվան հետ, ուստի և հոլովների կապակցությունից շատ է խոսվել Արեղյանի մասին թե՛ անցյալում և թե՛ վերջին երկու տարվա բանավեճերի ժամանակ: Ջանացել են ամեն կերպ տատանումներ, հակասություններ և սխալներ որոնել նրա դրածների մեջ, նույնիսկ ինքն իրեն հակադրել:

Արեղյանի «տատանումը» ցույց տալու համար բերում են հետևյալը. Հայտնի է, որ «Տարրական բերականության» մեջ (1907 թ.) նա «Դերանունների հոլովումը» բաժնում վեց հոլով է դրել (դերանունների համար)՝ ուղղական, սեռական, տրական, բացառական, գործիական, ներգոյական: Բայց արդյո՞ք այն պատճառով, որ նա վեց հոլով է ընդունել:

«Աշխարհաբարի հոլովները» (1908 թ.) գրքի հենց առաջին երեսում կարդում ենք. «Մենք մեր «Աշխարհաբարի բերականության» մեջ հինգ հոլով ենք դրած՝ ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական, իսկ «Տարրական բերականության» մեջ բացի վերոհիշյալներից և սեռական: Ճիշտ ենք համարում առաջինը, այսինքն հինգ հոլով առանց հայցականի և սեռականի»¹⁶: Ուրեմն՝ հենց այն տարիներին, երբ Արեղյանը «Տարրական բերականության» մեջ վեց հոլով է դրել, իսկ «Աշխարհաբարի բերականության» մեջ հինգ հոլով, ինչպես ինքն է ասում՝ ճիշտ է համարել հինգ հոլովը: Այնուամենայնիվ ինչու՞ է նա «Տարրական բերականության» մեջ վեց հոլով դրել: Արեղյանը բացատրում է. «Եթե Տարր. բերականության» մեջ վերցրել ենք սեռականը, այդ արել ենք զլխավորապես այն պատճառով, որ մտածել ենք, թե ոչ մի ուսմունք այնպես ավանդապահ չէ, ինչպես բերականությունը, — վարժապետների համար դժվար կլիներ առանց սեռականի տեսնել մի բերականություն, որովհետև ըստ երևույթին կան սեռականի մնացորդներ հայերենում»¹⁷:

Պարզ է, ուրեմն, Արեղյանը «Աշխարհաբարի բերականության» մեջ՝ 1906 թ. և հետագայում ևս ընդունել է հինգ հոլով, բայց «Տարրական բերականության» մեջ դերանունների համար վեց հոլով է դրել՝ ավանդապահությունը հետզհետե հաղթահարելու նպատակով:

Արեղյանի դեմ առարկություններից մեկն էլ այն է, թե նա ձևականորեն հինգ հոլով ընդունելով հանդերձ, իբրև թե իր «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ ութ հոլով է ընդունել: Թե որտեղից է գալիս այս թյուր կարծիքը, դա հասկանալի է: Այդպես կարծողները ելնում են Արեղյանի՝ հայցական հոլով, սեռական հոլով արտահայտություններից և մեկ էլ նաչում են «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ «Հոլովների նշանակությունն և կիրառությունը» բաժնում գրված ենթավերնագրերին, որ են՝ ուղղական հոլով, կոչական. հայցական, սեռական, տրական հոլով, բացառական հոլով, գործիական հոլով, ներգոյական հոլով: Նախ՝ հենց վերնագրերի մեջ նա կոչական, հայցական,

¹⁶ Մ. Արեղյան, Աշխարհաբարի հոլովները, էջ 3:

¹⁷ Նույն տեղում: Հետևյալ էջերում հեղինակը պարզում է, որ այդ մնացորդները (դերանվական ձևերը) իսկապես երևութական, ըստ երևույթինս են, իսկ իրականում՝ դրանք արդեն հայերենում սեռական չեն:

սեռական բառերի հետ չի դրել հոլով բառը և դա պատահաբար արված բան է, և ապա՝ թե ինչ է բացատրված հիշյալ վերնագրերի տակ և ինչ է հասկանում Արեգյանը հայցական հոլով, սեռական հոլով տերմիններով, այդ մասին չեն խոսում: Արեգյանը շատ պարզ բացատրել է թե՛ իր դործածած այդ տերմինների նշանակությունը և թե՛ շարահյուսության մեջ սեռականը, հայցականը և կոչականը առանձին ղեկու պատճառը: «Աշխարհաբարի հսկվները» աշխատության մեջ գրված է. «1. Պետք է որոշ կերպով տարբերել իրարուց հոլով բառ ձևի և հոլով բառ նշանակության կամ կիրառության միայն:

2. Մեր աշխարհաբար լեզուն բառ ձևի (formell) միայն հինգ հոլով է զանազանում. ուստի ձևաբանության մեջ (formenlehre) միայն հինգ հոլով պիտի գնել:

3. Ինչպես կոչականը, նույնպես և հայցականն ու սեռականը բառ նշանակության կարելի է հոլով համարել. ուստի դրանց ուսումը պետք է մտնի շարահյուսության մեջ:

Սեռական հոլովը պիտի պահել 2-րդ հոլովի իբրև անվան վերադիր դործածության համար, ինչպես և հայցական տերմինը ոչ թե ձևի համար պիտի դործածել, այլ ուղղականի և տրականի հոլովական ձևերի իբրև անցողական բայերի սեռի խնդիր դործածության համար: Այսպես վարվում են արդեն մեր բերականները կոչական հոլովի համար, որ բառ ձևի առանձին հոլով չեն գնում»¹⁸:

Նույնը ասված է և «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ, որտեղ միասամանակ բացատրված է, թե ինչու կոչականը, հայցականը և սեռականը առանձին են գրված. «Ման. 1. թեպետև մեր աշխարհաբարն իսկապես չունի կոչական, հայցական և սեռական հոլովներ, այսինքն այդ հոլովներն այլևս ոչ թե բառի առանձին ձևերով են որոշվում, այլ միայն դրությամբ կամ կիրառությամբ, բայց և այնպես կոչական, հայցական և սեռական անունները իբրև շարահյուսական հարաբերությունների արտահայտիչներ ոչ միայն ընդունելի, այլև նույնիսկ անհրաժեշտ են, ի նկատի ունենալով, որ մեր քերականության ուսումը լինում է միշտ զուգընթաց դրաբարի և օտար լեզուների քերականության ուսման հետ: Այս պատճառով և ներքևում այդ հոլովներն առանձին-առանձին են վերցված»¹⁹: Շատ պարզ է ասված՝ հայցական հոլով, ևնական հոլով տերմինները հեղինակը դործածել է իբրև շարահյուսական հարաբերությունների արտահայտիչներ, այսինքն հայցական Արեգյանի տերմինոլոգիայով նշանակում է հայցական ուղղական (ինչպես՝ ներգոյական տրական, ներգործող խնդրի բացառական և այլ տերմիններ), այն է՝ ուղղական հոլովի կիրառությունների մի խումբ, որ մեր հին լեզվում (և ուրիշ լեզուներում) արտահայտվում էր մի առանձին հոլովով՝ հայցականով: Հենց Հայցական վերնագրի տակ Արեգյանը գրում է. «Ուղղականն իբրև հայցական (հայցական ուղղական) ցույց է տալիս...», և 9 երեսում բացատրում է ուղղականի կիրառությունները հայցականի նշանակությամբ:

Որ այստեղ Արեգյանը հայցական հոլովի կիրառությունները չի բացատրում, այլ ուղղական հոլովի՝ հայցականի նշանակությամբ կիրառություններն է բացատրում, երևում է նաև հետևյալից. այստեղ չկան այն ձևերը, որ

¹⁸ Նույն տեղում. էջ 83—84:

¹⁹ Մ. Արեգյան. Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 399:

կոչում են «տրականաձև հայցական»։ ինչպես՝ բուժեցին հիվանդին. եթե նա հայցական ասելով հասկանար այն, ինչ որ այժմ են հասկանում, այսինքն՝ ուղղականից տարրեր և առանձին հոլով, ասյա Հայցական վերնագրի տակ պետք է դնեք նաև հայցական հոլովի այդպիսի կիրառությունները, այսինքն «տրականաձև հայցական» կոչվածը, այնինչ նա դրանք քննում է տրական հոլովի՝ «Կրող խնդրի տրական» ենթախորագրի տակ։ «Մենք շունինք հայցականի համար առանձին ձև, շունինք ուրեմն և գրաբարի հայցական հոլովը։ Իրա պաշտոնը որոշ դեպքերում ուղղականն է յուր վրա առել, որոշ դեպքերում տրականը։ Իսկ այդ դեպքերը որոշելը շարահյուսության գործ է»,— գրում է Աբեղյանը²⁰։ Հենց այս դեպքերը, այսինքն՝ թե գրաբարի հայցական հոլովը ո՞ր դեպքերում է ուղղականն իր վրա առել, ո՞ր դեպքերում տրականը—այդ դեպքերն են, որ տրված են «Շարահյուսության» մեջ՝ ուղղական և տրական հոլովների կիրառություններին վերաբերող հատվածներում, և ոչ թե իրար կողք-կողքի, ինչ որ բնական կլինեք, եթե նա հայցականը իբրև առանձին հոլով ընդուներ ու քններ։ Հայցականը սոսկ մի հարմար տերմին էր Աբեղյանի համար, որով անվանում էր ուղղականի մի քանի կիրառությունները և միաժամանակ ցույց էր տալիս արդի հայերենի պատմական կապը մեր հին լեզվի հետ։ «Եվ ինչո՞ւ պիտի մենք,—կարդում ենք «Աշխարհաբարի հոլովները» աշխատության մեջ,—ուրեմն հայցական հոլով դնենք և ասենք նման է ուղղականին կամ տրականին և ոչ թե շարահյուսության մեջ բացատրենք, թե մեր ուղղականը և տրականը գործ են ածվում նաև ուրիշ լեզուների և մեր գրաբարի հայցական հոլովի իմաստն աբտահայտելու համար»²¹։

Այդպես էլ վարվել է նա, «Շարահյուսության» մեջ բացատրել է, թե մեր (ժամանակակից հայերենի) ուղղականն ու տրականը գործ են ածվում ուրիշ լեզուների և գրաբարի հայցական հոլովի իմաստն աբտահայտելու համար։

Եվ նա այդպես է վարվել թի նկատի ունենալով, որ մեր քերականության ուսումը լինում է միշտ զուգընթաց գրաբարի և օտար լեզուների քերականության ուսման հետ»։

«Ուղղականի ձևն... հետզհետե գործ է ածվում իբրև հայցական,—գրում է Աբեղյանը,—մինչև որ վերջապես այդ ձևն իշխող է դառնում։ Հետևանքն այն է լինում, որ հին հայցական հոլովն ըստ ձևի դուրս է ընկնում, և մնում է միայն ուղղական հոլովը, բայց ընդարձակված կիրառությամբ, այն է՝ աշխարհաբարում ուղղականն իր վրա է առել մասամբ նաև հայցականի ֆունկցիան, այնպես որ ուղղականն է՝ ուղղական—կոչական—հայցական»²²։

²⁰ Մ. Արեղյան, Աշխարհաբարի հոլովները, էջ 13։

²¹ Նույն տեղում, էջ 13—14։

²² Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 336։ Հայցականի ձևի վերացումը պատմականորեն, հայոց լեզվի զարգացման ընթացքում, շատ լավ երևում է միջնադարյան մատենագրական հուշարձաններում։ Միջին հայերենում բազմաթիվ են այն դեպքերը, երբ ուղղականի ձևը գործածվում են հայցականի իմաստով, օրինակ. «Աղուես մի քաղցեալ ետես սառ և պաղ ցանկալի ի ձմեռնային ատուրն», «Ջէշն մեծարեցին և կոչեցին ի հարսանիւն», «Քանձրացաւ արիւն ի յաշիփո», «Ջրկեմք, արբենամք... և այլ մեղք գործեմ» (Ն. Մառ. Ժողովածոյք առակաց Վարդանայ, ՍՊԲ, 1894, էջք 94, 97, 99) և այլն։ Բերված օրինակներում է հոգնակիակերտ մասնիկով ուղղականը հայցականի պաշտոն է ստացել։ Հայցականի ս հոլովակազմիչը բոլորովին դուրս է ընկնում, երբ է հոգնակիակերտին փոխարինում են եր, ներ վերջավորությունները։ Այս մասին տե՛ս Մ. Արեղյան, Աշխարհաբարի հոլովները, էջ 14—15, Հայոց լեզվի տեսություն, էջ 411, ծանոթ։

«Աշխարհաբարի շարահյուսության» մեջ Աբեղյանը ուղղական հոլով վերանագրի հայցական ենթավերնագրի տակ գնում է հենց հայցականի այն ֆունկցիաները, որոնք իր վրա է առել ուղղական հոլովը:

«Տրականի կիրառությունը ևս ընդարձակվում է և այս հոլովն ևս ստանում է նաև հայցականի ֆունկցիաների մի մասը»²³: Եվ ահա՝ «Կրող խնդրի տրական» ենթավերնագրի տակ Աբեղյանը դրել է մեր հին հայցականի այն կիրառությունները, որ իր վրա է առել տրական հոլովը:

Խնդիրը նույնն է նաև սեռականի վերաբերյալ, որ ավելորդ ենք համարում մանրամասնել:

Պետք է նկատի ունենալ և այն, որ ուղղական հոլովի կիրառությունները շատ-շատ են, ուստի և հարմար է եղել դրանք բոլորը նախ բաժանել երեք մեծ խմբի՝ բուն ուղղական, կոչական ուղղական, հայցական ուղղական և ապա որանցից յուրաքանչյուրն իր հերթին բաժանել ենթախմբերի՝ համաձայն դրանց արտահայտած նշանակությունների: Այսպես վարվել է Աբեղյանը և տրականի նկատմամբ՝ նրա կիրառությունները բաժանելով երկու մեծ խմբի և սեռական անվան տակ բացատրելով «միևնույն հոլովական ձևի գործածությունն իրրև վերադիր»²⁴:

Ուրեմն Աբեղյանը շատ պարզ բացատրել է իր գործածած տերմինների նշանակությունը և այն, թե ինչու և անձև հոլովներն առանձին են վերցված շարահյուսության մեջ: Ոչ ոք չի կարող մեղադրել Աբեղյանին, թե ինչու է նա այդ տերմինները գործածել. ժամանակակից քերականներն իրավունք ունեն գործածելու կոչական բառը և դրա տակ հասկանալու ոչ թե առանձին հոլով, այլ ուղղականի մի կիրառություն, իսկ Աբեղյանն իրավունք չունե՞ր գրելու՝ կոչական, հայցական, հայցական հոլով և դրա տակ հասկանալու ուղղական հոլովի առանձին կիրառություններ: Բայց որքան էլ այդ տերմինների գործածությունը Աբեղյանի ժամանակ անխուսափելի և անհրաժեշտ է եղել իր ասած հիմունքներով, կարծում ենք, որ այժմ այլևս անորակա չէ և կարելի է քերականությունների մեջ ուղղականի կիրառությունները չբաժանել նախ 3 մեծ խմբերի և ապա կատարել ենթաբաժանումներ, այլ միանգամից կարելի է բացատրել ուղղականի բոլոր կիրառությունները որոշ հաջորդականությամբ՝ ենթակա, ստորոգյալ, կոչական, կրող խնդիր, պարագա և այլն, նույն ձևով կարելի է նաև տրականի կիրառությունները բացատրել:

Աբեղյանը հետևողականորեն հինգ հոլով է ընդունել և դրել ոչ միայն ձևաբանության և շարահյուսության մեջ, այլև բառակազմության մեջ: Այստեղ էլ նա գործածում է սեռական, հայցական անվանումները, բայց դարձյալ իբրև շարահյուսական հարաբերությունների արտահայտիչներ: Գործողի անվան կամ ածականի իմաստով բարդությունների մասին խոսելիս նա գրում է, որ երբ այդպիսի բարդության առաջին մասը գոյական է, ստանում է զանազան հոլովներ և նախադրությունների ու ետադրությունների նշանակություն»²⁵, ուղղականի նշանակություն, հայցականի նշանակություն և այլն, և բերում է օրինակներ յուրաքանչյուրի համար: Հայցականի նշանակությամբ գործածվածների համար բերած օրինակներից է «մարդասեր—մարդ սիրող»:

²³ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 338:

²⁴ Նույն տեղում, էջ 419:

²⁵ Նույն տեղում, էջ 205, րնդգծ. մերն են:

Այստեղ ևս նա հոլով բառը չի գործածում, այլ՝ «ուղղականի նշանակությամբ, հայցականի նշանակությամբ... բացառականի նշանակությամբ» և այլն: Սակայն երբ հոլովի մասին է խոսքը, նա բարդության՝ հայցականի նշանակությամբ գործածված բաղադրիչը համարում է ուղղական հոլովով դրված, բերելով հենց միևնույն օրինակը. իսկական բարդության մասին խոսելիս գրում է. «Բարդության առաջին մասի համար առնվում է էղակի ուղղական հոլովը, օրինակ՝ մարդ-ա-սեր»²⁶: Այսպիսով՝ բառակաղմության մեջ ևս Արեղյանը հայցականի նշանակությամբ բառը ուղղական հոլովով դրված է համարում:

Մի կողմ թողած Արեղյանի իր իսկ բացատրությունը տերմինների և անձև հոլովներն առանձին դնելու մասին, պրոֆ. Աղայանը իր ձևով է մեկնաբանում այդ բանը: Խոսելով այն մասին, թե Արեղյանը ձևաբանորեն հինգ հոլով ընդունելով հանդերձ շարահյուսության մեջ իբրև թե ըստ նշանակության ութ հոլով է ընդունել, պրոֆ. Աղայանը այդ բանը բացատրում է նրանով, թե Արեղյանն այդ արել է որպես թե հոլովների թիվը հարմարեցնելով նախադասության մեջ բառերի պաշտոնների թվին: Պրոֆ. Աղայանն իր վերոհիշյալ գրքում գրում է. «Նախադասության բանի՝ տեսակ անդամներ կան.— ենթակա, ստորոգյալ, ուղիղ խնդիր, հանգման անուղղակի խնդիր, միջոցի անուղղակի խնդիր, անջատման անուղղակի խնդիր, պարագաներ, հատկացուցիչ, որոշիչ, բացահայտիչ (10)»²⁷: Այս ասում է ինքը պրոֆ. Աղայանը, բայց նկատի ունենալով, թե Արեղյանի համար էլ այդպես է. «Մա մենք բխեցնում ենք նրա ընդհանուր դրույթից և ընդունած հոլովական նշանակությունների քանակից»,— տողատակի ծանոթության մեջ գրում է պրոֆ. Աղայանը: Սակայն Մ. Արեղյանը ոչ մի տեղ նախադասության մեջ բառերի ունեցած պաշտոնների այդպիսի դասակարգում չի կատարել: Ահա նրա դասակարգումը. «Խոսքի մասերը նայելով խոսքի մեջ իրենց կատարած պաշտոնին լինում են՝ բայ, ստորոգյալ, ստորոգելիական վերադիր, ենթակա, խնդիր, պարագա և վերագիր: Բայն ու ստորոգյալը կամ ստորոգելիական վերադիրը սովորաբար միասին են առնվում իբրև խոսքի մի մաս և կոչվում են բայ-ստորոգյալ»²⁸: Այս խոսքերից անմիջապես հետո նույն տեղում Արեղյանը տալիս է բառերի հիշյալ հինգ պաշտոնների (1. բայ-ստորոգյալ, 2. ենթակա, 3. խնդիր, 4. պարագա, 5. վերագիր) համառոտ բնորոշումը և ապա առանձին զխով՝ «Խոսքի մասերն առանձնապես» վերնագրի տակ մանրամասնորեն բացատրում է այդ պաշտոնների առանձնահատկությունները: Բայց պրոֆ. Աղայանն իր գրքի նույն էջում շարունակում է. «Արդ, ստորոգյալը բայ է, որոշիչը՝ ածական, բացահայտիչը հոլովով համաձայնում է բացահայտյալի հետ, ուրեմն առանձին հոլովական նշանակություն չի կարող համարվել, միջարկությունները, շաղկապները ևն հոլովելի բառեր չեն, մնում են ուրեմն՝ ենթակա, հատկացուցիչ, ուղիղ խնդիր, 3 անուղղակի խնդիր, պարագա և կոչական բառ, ընդամենը՝ 8: Ահա և հոլովական նշանակություններ»²⁹: Այսպիսի դասակարգում ևս չի կատարել Մ. Արեղյանը: «Ստորոգյալը բայ է»— ո՞ւմ տեսակետից: Արեղյանի համար ոչ մի դեպքում ստորոգյալը բայ չէ, ըստ Արեղյանի «Ստորոգյալն ուրեմն իբրև խոսքի

26 Մ. Արեղյան, Նշվ. աշխ. էջ 189:

27 է. Բ. Աղայան, Նշվ. աշխ., էջ 188:

28 Մ. Արեղյան, Հայոց լեզվի սեռություն, էջ 365:

29 է. Բ. Աղայան, Նույն տեղում, էջ 188—189:

մաս՝ եմ, լինիմ բայի այն գոյական կամ ածական լրացումներն են, որոնք պարզում են այդ բայի ընդհանուր անորոշ բայիմաստը և ցույց են տալիս, թե ինչ հատկանիշ է վերագրվում ենթակային: Օրինակ՝ Աստված բառի է խոսքի մեջ բառի ստորոգյալ է, Աստված՝ ենթակա, իսկ է՝ էական բայ:

Խոսք կազմող զորություն ունի ոչ թե ստորոգյալը, այլ է բայը, որովհետև նա է ցույց տալիս ստորոգում»³⁰:

Այսպես է, Աբեղյանը ոչ մի անգամ բայն ու ստորոգյալը չի նույնացրել, նրա տեսությամբ ստորոգյալը, որ ուրիշ լեզուների քերականությունների մեջ պրեդիկատ է կոչվում, եմ, լինիմ բայի գոյական կամ ածական լրացումն է. կարող են դրանք՝ գոյականն ու ածականը նույնը լինել, ինչ որ բայն է՝ դրանց լրացյալը (կամ խնդրառու բառը):

«Լինում են ուրեմն՝ ենթակա, հատկացուցիչ, ուղիղ խնդիր, 3 անուղղակի խնդիր, պարագա և կոշական բառ»։ ոչ «որոշիչ», ոչ էլ «հատկացուցիչ» առանձին պաշտոններ, որոնց մասին խոսում է պրոֆ. Աղայանը («որոշիչ»-ը տե՛ս սույն քաղվածքի սկզբի մասում՝ որ բերված է վերևում), Աբեղյանի տեսության մեջ չկան: Աբեղյանն ընդունում է նախադասության անդամի մի պաշտոն, որ կոչվում է վերադիր և ունի երկու ենթատեսակ՝ մականուն և բացահայտիչ: Նմանապես խնդիրների այն դասակարգումը («3 անուղղակի խնդիր»), որ նկատի ունի պրոֆ. Աղայանը, Աբեղյանին չէ: Աբեղյանը բոլոր խնդիրները բաժանում է չորսի՝ «խնդիրները նայելով բայիմաստի հետ ունեցած հարաբերության լինում են՝ կրող խնդիր, ներգործող խնդիր, բնության խնդիր և պարագայական խնդիր»³¹, բայց այս չորս խնդիրները պրոֆ. Աղայանի ասածը չեն. «3 անուղղակի խնդիրներ՝ հանգման, միջոցի և անջատման» Աբեղյանի մոտ այդ կարգով չկան, այժմ այդպես կոչվողները մտնում են մեկ ընդհանուր տեսակի՝ բնության խնդրի մեջ: Աբեղյանն ունի նաև ներգործող խնդիր, որ ոչ կրող խնդիր է, ոչ բնության, ոչ էլ պարագայական, դրա մասին նշված տեղում ոչինչ չի ասում պրոֆ. Աղայանը, և ապա՝ Աբեղյանն ունի պարագայական խնդիր, որ դնում է պարագաների մեջ:

Բառերի պաշտոնների տեսականների այն դասակարգումը, որ Աբեղյանին վերագրել է կամ «բխեցրել է նրա ընդհանուր դրույթից» պրոֆ. Աղայանը, առնչություն չունի Աբեղյանի տեսության հետ: Պրոֆ. Աղայանն իր ընդունած և արդի դպրոցական քերականության մեջ տարածված համակարգն է վերագրել Աբեղյանին, ուստի և իրական չէ հոլովների թվի և բառերի շարահյուսական պաշտոնների թվի արհեստական հարմարեցման գաղափարը, որ նա դարձյալ վերագրել է Աբեղյանին: Ինչ կերպ էլ որ հաշվենք բառերի պաշտոնները, որ ընդունել է Աբեղյանը, դրանք ոչ մի կերպ չեն համապատասխանում պրոֆ. Աղայանի նշանակած 8 թվանշանին: Աբեղյանի ընդհանուր մեծ դասակարգմամբ բառերի պաշտոնները հինգն են, ինչպես նշվեց վերևում (այս հինգ թիվը կապ չունի հոլովների քանակի հինգ թվի հետ), իսկ եթե այդ պաշտոնները հաշվենք իրենց ենթատեսակներով, կստացվի հետևյալը.

բայ-ստորոգյալ—2 տեսակ (պարզ և բաղադրյալ բայ-ստորոգյալ),
ենթակա—1

30 ԻՄ. Աբեղյան, նույն տեղում, էջ 368:

31 Նույն տեղում, էջ 374:

խնդիր—3 տեսակ (կրող, ներգործող, բնության, իսկ պարագայական խնդիրները մտնում են պարագաների մեջ),

պարագա—6 տեսակ (տեղի, ժամանակի, ձևի և միասնության, չափ ու քանակի, հիմունքի, եղանակի),

վերադիր—2 տեսակ (մականուն, բացահայտիչ)։

— ընդամենը 14 պաշտոն։ Ուրեմն, ըստ Աբեղյանի, բառերի պաշտոնը նախադասության մեջ լինում է՝ ընդհանուր մեծ դասակարգմամբ—5, իսկ ենթատեսակներով—14։ Էլ որտե՞ղ է Մ. Աբեղյանն ընդունել նախադասության մեջ բառերի 8 պաշտոն, և ի՞նչ իմաստ ունի հոլովների քանակը բառերի պաշտոնների քանակի հետ արհեստականորեն համաձայնեցնելը, մի՞թե հոլովների թիվը և բառերի պաշտոնը մեկը մյուսով են պայմանավորված։

Որ Աբեղյանը թե՛ ձևաբանության և թե՛ շարահյուսության մեջ հինգ հոլով է ընդունել, այդ անկասկած է. այնուամենայնիվ հետաքրքիր է մի նշանավոր լեզվաբանի կարծիքը։ Ա. Մեյեն Աբեղյանի «Աշխարհաբարի շարահյուսության» մասին իր գրախոսականում 1912 թ. գրել է. «Հետևելով Միկլոշիչի օրինակին՝ հեղինակը միշտ ելնում է ձևից և մանրամասն նկարագրում ամեն մի ձևի կիրառությունները։ Հետևաբար նա իր լեզվում ընդունում է միայն հինգ հոլով՝ ուղղական, տրական, բացառական, գործիական և ներգոյական։ Սեռականն ամբողջովին ձուլվում է տրականին. դերանվան մեջ ձևերը ծագում են մասամբ տրականից՝ ինձ, քեզ, մասամբ սեռականից՝ իրեն, նրան։ Չկա հայցականի որոշակի ձև. անշունչ առարկաների համար ուղիղ խնդիրն արտահայտվում է ուղղական հոլովաձևով, իսկ շնչավորների համար՝ սեռական-տրականի ձևով»³²։ Այս խոսքերը Մեյեն գրել է «Աշխարհաբարի շարահյուսություն» գրքի մասին, որի մեջ իբրև թե Աբեղյանը ութ հոլով է ընդունել. արդյո՞ք Մեյեն չի հասկացել Աբեղյանին։

Խոսելով Աբեղյանի շարահյուսության մասին, պրոֆ. Աղայանը գրում է. «Ամեն մի ձև կարող է մի քանի, երբեմն և շատ» հարաբերություններ ցույց տալ խոսքի մեջ, ուրեմն կան ըստ նշանակության շատ հոլովներ։ Մնում է պարմանալ, որ ուղղականն իբրև կոշական առանձին հոլովական նշանակություն համարելով, այդպիսին չի համարում նաև, օրինակ, ուղղականն իբրև որոշիչ, կամ չի անջատում բացառականի այնքան տարբեր նշանակությունները, ինչպիսիք են ներգործող խնդրի իմաստը և տեղի կամ պատճառի պարագայինը»³³։ Ջարմանքն այստեղ ավելորդ է. հապա ի՞նչ է արել Մ. Աբեղյանը իր գրքի «Հոլովների նշանակությունն և կիրառությունը» գլխի ամբողջ 70 էջերում, որտեղ ամեն մի հոլովի տակ մանրամասնորեն նկարագրել է տվյալ հոլովի բոլոր նշանակություններն ու կիրառությունները, դասակարգել և անվանել դրանք։ Դուրս է գալիս, ուրեմն, որ երբ Աբեղյանը «ներգործող խնդրի բացառականի» տակ գրել է. «Բացառականը ցույց է տալիս կրավորական բայերի ներգործող խնդիրը, որից իբրև սկզբնապատճառից ծագում, առաջ է գալիս գործողությունը»³⁴, դա հոլովական առանձին նշանակություն չէ, իսկ երբ «կոշականի» տակ գրում է. «Ուղղական իբրև կոշական ցույց է տալիս այն

³² Bulletin de la Société de Linguistique de Paris, XVIII (N° 61, 2), 1913.

³³ Է. Բ. Աղայան. *Երկն տեղում*, էջ 188.

³⁴ Մ. Աբեղյան. *Երկն տեղում*, էջ 450.

անձը, կամ իբրև անձ մտածված ամեն ինչ, որի անունը տալով՝ ձայնում, կոնչում ենք մի բան ասելու կամ հարցնելու համար» — դա արդեն հոլովական առանձին նշանակություն է:

Պրոֆ. Աղայանի գրքում (և հոգվածում) մի երկու տեղում էլ ճիշտ չեն ներկայացված Արեղյանի գրածները: Այսպես՝ նա իր գրքի 212-րդ էջում գրում է. «Գիտենք, որ հենց Մ. Արեղյանի պնդումով՝ ինձ, Բեզ, նրան անձնական դերանունների տրականի հոլովածն են» և ապա շարունակում է. «Իմ և ինձ, Բեզ, Բեզ, Բեզ և նրան տարբեր ձևեր են, որոնցից առաջինները Մ. Արեղյանը համարում է ստացական ածականներ»: Դուրս է գալիս, որ Արեղյանը նրան բառաձև անձնական դերանուն է համարել, իսկ նրա բառաձևը՝ ստացական ածական, մինչդեռ Արեղյանը ոչ այն է արել, ոչ էլ մյուսը: Արեղյանը ստացական ածական կամ ստացական դերանուն համարել է միայն՝ իմ, բո, իր, մեր, ձեր հինգ բառաձևերը, իսկ սրա-սրան, դրա-դրան, նրա-նրան համարել է ցուցական դերանվան մեկ հոլովի, այն է՝ տրականի զույգ ձևեր³⁵:

* * *

Կա մի նախապաշարմունք. ոմանք մտածում են՝ էթնաշնչաբանական զեւոյց զպրոց նախադասության մեջ զպրոց բառը ուղղական հոլով կոչենք, ապա մենք չենք հասկանա, թե դա տեղի պարագա է, կամ՝ զետի ջրերը հոգիացել են նախադասության մեջ էթն զետի բառը տրական կոչենք, ապա չենք հասկանա՝ դրա պաշտոնը: Բայց հազարավոր մարդիկ, նաև նրանք, որ հոլովից ու քերականությունից զազափար շունեն, գործածում են այդպիսի խոսքեր և լսողներն էլ հասկանում են, որ բերված նախադասություններում զպրոց-ը այն տեղն է, զետի ուր ուղղվում է գործողությունը, իսկ զետի բառը, որ ջրերը բառի լրացումն է, ցույց է տալիս, որ խոսքը զետի ջրերի մասին է, այլ ոչ թե ծովի կամ օվկիանոսի, և բոլորովին ուշադրություն չեն դարձնում այն բանի վրա, թե քերականներն ինչպես կանվանեն դրանց հոլովը՝ ուղղական թե հայցական, սեռական թե տրական:

Բառի պաշտոնը մենք ոչ թե նրա հոլովով ենք որոշում, այլ նախադասության մյուս բառերի հետ ունեցած հարաբերությամբ: Բառի պաշտոնը և հոլովը տարբեր բաներ են: Կրող խնդիրը կարող է զրվել ուղղական և տրական հոլովներով, բայց չի զազարում կրող խնդիր լինելուց, նույնպես և տեղի պարագան կարող է զրվել ուղղական, տրական, ներգոյական և մյուս հոլովներով, բայց միշտ էլ մնում է տեղի պարագա:

Արմատացած այն սովորությամբ, ըստ որի ուղղականի ձևով զրված տեղի պարագային և կրող խնդրին պետք է հայցական ասել, մասամբ գալիս է զպրոցական քերականություններում հոլովների այն սխալ սահմանումից, ըստ որի ուղղական հոլովն իբր թե ենթակայի հոլովն է, իսկ հայցականն ուղիղ խնդրի հոլովը: Մեր լեզվի մեջ այդպիսի բան չկա: Ուղղական հոլովը ձևաբանորեն սոսկ բառի ուղիղ ձևն է, իսկ շարահյուսորեն դա նույնքան ենթակայի հոլովն է, որքան ստորոգյալի, ստորոգելիական վերադրի, տեղի պարագայի, կրող խնդրի և այլն: Նմանապես տրական հոլովը ոչ թե մի կոնկրետ պաշտոնի կամ նշան-

³⁵ Տե՛ս Մ. Արեղյան, Աշխարհարարի հոլովները, էջ 20 և հտ., 32: Հայոց լեզվի տեսություն, էջ 339:

նակության հոլով է, այլ ձևաբանորեն սոսկ բառի մի կոնկրետ ձև է, իսկ շարահյուսորեն արտահայտում է բազմազան և իրարից տարբեր հարաբերություններ:

Շարահյուսական պարզ է, որ արդի հայերենում կա միայն հինգ հոլով՝ ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական. շարահյուսության մեջ պետք է բացատրվեն այդ հոլովներից ս.մ.ն. մեկի արտահայտած հարաբերությունները:

Արդի հայերենի հոլովների մասին միևնույն եզրակացությանն է հանգել նաև պրոֆ. Գ. Զահուկյանը՝ իր նորերս լույս տեսած աշխատության մեջ³⁶ հոլովների հարցը քննելով լեզվաբանական նորագույն մեթոդներով:

Հոլովների վերաբերյալ ավանդական սխեմաներն այժմ արդեն կաշկանդում են մեր լեզվի գիտական ուսումնասիրությունը և, որ ավելի կարևոր է, արհեստականորեն դժվարացնում են դպրոցներում հայոց լեզվի ուսուցման գործը՝ ուսուցիչներին ստիպում են աշակերտների հետ ժամանակ վատնել նմանաձև հոլովները տարբերակելու համար կատարվող անիմաստ վարժությունների վրա: Ավելի ճիշտ և հեշտ է աշակերտներին հինգ շոշափելի ձևեր՝ բոլորեցնել, բան թե յոթ հոլովի անվան տակ կրկնել տալ միևնույն ձևերը՝ ուղղ. հաց, հայց. հաց, սեռ. հացի, տր. հացի, որ աշակերտը միայն մեխանիկորեն կարող է ասել առանց հասկանալու:

Դպրոցական քերականություններում հինգ հոլով դնելուն հակառակվողների դիմադրությունը հիմնված է ոչ թե լեզվական տվյալների, այլ գլխավորապես սովորածից, երկար տարիներ արմատացած սովորությունից հրաժարվելու հրգեբանական դժվարության վրա: Բայց դա չպետք է խանգարի գիտականորեն ապացուցված հինգ հոլովական համակարգը դպրոցական քերականություններում դնելուն: Պետք է նկատի ունենալ նաև, որ հինգ հոլովի համակարգը ո՛չ նորություն է և ո՛չ էլ լեզվից կտրված վերացական տեսություն. այն կապ չունի ժամանակակից լեզվաբանական ուղղությունների և մեթոդների հետ, և եթե այժմ լեզվաբանները խոսում են այդ մասին, դրանով միայն վերականգնում և հաստատում են Մ. Արեղյանի ավելի քան 60 տարի առաջ փաստարկած և հիմնավորած տեսությունը. այդ տեսությունը գործնականում ևս բռնել է քննություն, բանի որ, ինչպես սկզբում ասվեց, մոտ 30 տարի դպրոցներում գասավանդել են Մ. Արեղյանի և նրա հետևողությամբ կազմված դասագրքերով:

О ПАДЕЖАХ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

II. Е. ШАРАБХАНИЯН, Э. А. ПИВАЗЯН

(Р е з ю м е)

В статье рассматривается система падежей современного армянского языка и показывается правильность теории выдающегося арменоведа-лингвиста М. Абеяна, согласно которой в современном армянском языке имеется пять падежей — именительный, дательный, исходный, творительный и местный. В процессе исторического развития языка

³⁶ «Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը», Երևան, 1967:

родительный и винительный падежи лишились собственной формы, причем винительный падеж по форме совпал с именительным, а родительный — с дательным; функцию родительного падежа ныне выполняет дательный падеж, а функцию винительного падежа — именительный и дательный. Исследования, проведенные по новейшим лингвистическим методам, подтверждают справедливость теории о пяти падежах.

Отжившие свой век падежи должны быть исключены из учебников грамматики. Включение их в школьные грамматики не вытекает из языковых данных, а идет по традиции. Это вызывает лишь несоответствие и противоречие между реальными фактами языка и грамматикой, а главное затрудняет изучение армянского языка в школе.